Ալեքսանդր Ծատուրյան

Գետակ

Քիչ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաչուն,
Անկյանք ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քիչ էլ սգա ...և ուր որ է քեզ գարուն
Նոր կյանք կըտա՝ քո լաց-սուգին վերջ տալով:

Եվ ազատված սառցե մաշող կապանքից,
Նորից, գետակ, կը թըռչկոտես համարձակ.
Եվ կարկաչըդ՝ ազատ ելած քո կըրծքից
Խոր անտառում կառնե ազատ արձագանք:

Քեզ վերևից կըփայփայե ժպտալով
Գարնան անամպ պարզ երկինքը կապուտակ.
Եվ դյութական հըրապուրիչ գույներով
Քո ջըրերում կըշողշողա արեգակ:

Եվ վաղորդյան հով զեփյուռը գարնային
Մեղմ կըհուզե մաքուր կուրծքդ կուսական.
Դալար ափիդ պարզ ժըպիտը երեսին,
Քեզ ամոթխած կ'ողջունե հեզ շուշան:

Քիչ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաչուն,
Դաժան ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քիչ էլ, քիչ էլ ...և ուր որ է վառ գարուն
Նոր կյանք կըտա՝ քո լաց-սուգին վերջ տալով...

Александр Цатурян

РУЧЕЙ

Что ты плачешь, печальный, прозрачный ручей?
Пусть ты скован цепями суровой зимы, —
Скоро вспыхнет весна, запоёшь ты звончей
На заре, под покровом немой полутьмы!..

И свободный от мёртвых, бездушных оков,
Ты блеснёшь и плеснёшь изумрудной волной,
И на твой жизнерадостный, сладостный зов
Вольный отклик послышится в чаще лесной.

И под шелест листка ветерка поцелуй
Заволнует твою белоснежную грудь,
И застенчивым лилиям в зеркале струй
На себя будет любо украдкой взглянуть.

Вся земля оживится под лаской лучей,
И бесследно растают оковы зимы.
Что ж ты плачешь, скорбящий, звенящий ручей?
Что ж ты рвёшься так страстно из тёмной тюрьмы?..